# Այբբենարան



2-րդ մաս

Բարև: Մենք այս գրքի հերոսներն ենք և  քեզ  գրքի առաջին հատվածում օգնեցինք ճամփորդել բառերի աշխարհում: Միասին սովորեցինք հայերեն կարդալ ու գրել: Մնացել է մի քանի տառ էլ սովորենք, որ կարողանանք հայերեն լիարժեք կարդալ: Մեզ հետաքրքիր արկածներ ու հետաքրքիր նորություններ են սպասվում:  Ճամփա ընկանք:



# ընտանիք   Ը ը, Ք ք



ը ը ը

Ը Ը Ը

ք ք ք

Ք Ք Ք

*1. Կարդա՛ և գրի՛ր:* 

ընտանիք, ընկեր, ընտիր____________________________________________

քար, քանոն, քամի________________________________________________

քուն, քոր, քույր___________________________________________________

մեծ ընտանիք ___________________________ մոտ ընկեր___________________

ընտիր քուն________________________  ամուր քար_______________________

երկար քանոն _________________________

փայտե քանոն_________________________

ամուր պարան___________________________________

*2. Վանկերը միացրո՛ւ և նոր բառ ստացիր:*

ըն-կեր, քա-նոն, քա-մի ____________________________________________

տո-նա-ծառ, ըն-տա-նիք ___________________________________________

### *3. Գտի՛ր թաքնված բառը:*

մանիտա, թիլփա, պաասնատակ,  տիկտա, պույտկա, լակե, մերուկձ, մեռձ, իձ, ըկենր, նըտիր

### *5. Նկարի՛ր ք-ի և ը-ի աշխարհը:*

### *6. Կրկնենք մեր անցած տառերը:*

ս, ա, ր, տ, ու, ն, շ, լ, ի, մ, կ ե, ո, պ, ձ, ռ, յ, ծ, փ, թ

Ս, Ա, Ր, Տ, Ու, Ն, Շ, Ի, Լ, Մ, Կ, Ե, Ո, Պ, Ձ, Ռ, Յ, Ծ, Փ, Թ

Էս էն է Է է Է է

է է է

Է Է Է

Էս էն է



______________________________________________



_______________________________ ցորենն է



_______________________________________________



_______________________________________________



_______________________________________________



***1. Կարդա՛ և գրի՛ր:***

յասաման, յոթ

ելակ, երակ

էկրան, էմմա

***2. Միացրո՛ւ վանկերը և ստացի՛ր բառեր:***

Քա, ըն, տա, կար, ապի, մի, ըն, կեր, միր, նոն, նիք, տակ, էկ, րան

***3. Գրի՛ր բոլոր սովորածդ տառերը և կազմի՛ր բառեր:***

***4. Նկարի՛ր Էս էն է բանաստեղծության քեզ դուր եկած հերոսներին:***



Դ դ դդում

Ղ ղ Ղափամա

Դ Դ Դ

դ դ դ

ղ ղ ղ

Ղ Ղ Ղ

***1. Կարդա՛ և գրի՛ր:***



դդում, դույլ, դրամ________________________________________

դեկ, ղափամա________________________________________

մանր դրամ________________________________________

դեղին դդում________________________________________

կլոր ղեկ ________________________________________

***2. Կազմի՛ր բառեր և բառակապակցություններ քեզ ծանոթ տառերով:***

________________________________________

________________________________________

________________________________________

***3. Կարդա՛ վանկերով և վանկերը միացրո՛ւ իրար:***

ղա-փա-մա ——————————, դա-նակ ——————————,

դա-րակ——————————, փայ-լուն——————————,

ձյու-նա-նուշ——————————, տո-նա-ծառ——————————,

պատ-յան——————————, կա-յա-րան——————————:

*4. Նկարի՛ր ղ և դ տառերի աշխարհը:*

*5. Տառախմբի սկզբից ավելացրու՛ թ տառը և գրի՛ր, թե ինչ բառ ստացվեց:*

աթ____________________

ուր____________________

ութ ____________________

աս____________________

ան____________________

*6. Շարունակի՛ր:*

ամուր տուն

փափուկ ____________________

կարմիր ____________________

երկար____________________

մեծ____________________

## Հաց, ցորեն, օրորոց  Օ, օ  Ց, ց Հ, հ

հ հ հ

Հ Հ Հ

ց ց ց

Ց Ց Ց

օ օ օ

Օ Օ Օ

***1. Կարդա՛ և գրի՛ր:*** 

հայ, համ, հաց, հոտ________________________________________________

ցուրտ, ցերեկ, ցորեն______________________________________________

հացահատիկ, հացաման_____________________________________________

օձ, օրորոց, օրացույց________________________________________________

Համիկ, Հայկ, Հնդկաստան___________________________________________

Ցորենից մենք հաց ստացանք: _________________________________________

___________________________________________________________________

Հայկն ու Համիկը մտերիմ ընկերներ են:_________________________________

___________________________________________________________________

*2. Դասավորի՛ր տառերը և ստացի՛ր բառեր:*

Հ, յ, կ, ա　　　հ, ա, կ, ս　　　ց, ր, ո, ե, ն　　　հ, ա, կ, տ, ա

____________　____________　____________　____________

*3. Գրի՛ր ըստ օրինակի:*　　　կ - Կարինե, կրիա, կարմիր

ծ -________________________________________

օ -________________________________________

ց-________________________________________

ձ - ________________________________________

պ- ________________________________________

դ -________________________________________

*4. Կարդա՛ և գրի՛ր::*

Ես հայ եմ: Իմ հայրիկը հայ է: Իմ պապը հայ է: Պապիս պապն էլ է հայ: Հայկ նահապետի անունով մեր երկիրն անվանել են Հայաստան: Հայերն ապրել են հին օրերում, ապրում են հիմա ու կապրեն հավետ: Ես հպարտ եմ, որ հայ եմ:

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

***5. Միացրո՛ւ վանկերը և ստացի՛ր բառեր:*** *Հայ, ցո, պա, րեն, րիկ, րան, թո, հա, նիր, հե, տակ, րոս*

______________________________________________

______________________________________________

# Չիր Չամիչ



չ չ չ

Չ Չ Չ

***1. Կարդա՛ և գրի՛ր:***



Ես չորս մատիտ ունեմ:

______________________________________________

Ինձ չիր ու չամիչ տուր ուտեմ:

______________________________________________

Ես ձյան փաթիլի նման սիրուն եմ:

______________________________________________

Արտին մոտիկ՝ մոռ ու մորի,

Մոռան կատուն կտրորի:

______________________________________________

______________________________________________

***2. Դասավորի՛ր տառերը և ստացի՛ր բառեր:***

ո, կ, շ, ի, կ        թ, ա, փ, ի, լ        կ, ա, կ, ա, տ        չ, մ, ա, ի, չ        ի, չ, ր

__________   __________   __________   __________   __________

**3.** ***Կազմում ենք բառակապեր և կարդում:***

**Սիրուն**

______________________________

______________________________

______________________________

*4. Շարունակի՛ր ըստ օրինակի:*

Լ- Լուսինե, լար, լուսին

Կ - ______________________________

Թ- ______________________________

Ա- ______________________________

Ձ- ______________________________

Փ- ______________________________

*5. Կարդա՛ և սովորի՛ր շուտասելուկը:*

Մուկ թողեմ ձուկ ուտեմ, ձուկ թողեմ ձուկ ուտեմ:

Պապը պատի տակ, տատը պատի տակ:

*6. Վանկերը միացրո՛ւ և ստացի՛ր բառեր:*

*հա* → *սակ* ______________

*հա* → *տակ* ______________

*հու* → *նիս* ______________

*հու* → *լիս* ______________

*ցո* → *րեն* ______________

*ցո* → *ղիկ* ______________





զանգակ գնդակ

Գգ Զզ

գ գ գ

Գ Գ Գ

զ զ զ

Զ Զ Զ

*1.Կարդա՛ և գրի՛ր:*



գալ, գայլ, գազար,____________________________________________

գորգ, գորտ, գրիչ,____________________________________________

զրո, մազ, զանգ,____________________________________________

զառ, զկեռ, զատիկ,____________________________________________

Գարիկ, Գագիկ, Գայանե,________________________________________

Զորիկ, Զարինե, Զինա, ________________________________________

մեծ զանգակ,____________________________________________

կարմիր գրիչ, ____________________________________________

գունավոր մատիտներ,________________________________________

կարմիր զատիկ, ____________________________________________

գորշ գայլ,____________________________________________

ծաղկած գարուն,______________________________________________________

զույգ գուլպա,________________________________________________________

երկար մազեր,_______________________________________________________

## *2.Գտի՛ր թաքնված բառերը և գունավորի՛ր:*

զարուն

ծաղիկ

ձյուն

նապաստակ

կապիկ

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ս | **ն** | տ | ի | ծ | ա | զ | ա | ր | ու | ն |
| յ | **ա** | ձ | փ | ա | շ | ս | լ | մ | ն | տ |
| ռ | **պ** | ն | ծ | ղ | ր | ի | մ | տ | ու | ս |
| գ | **ա** | ռ | ս | ի | չ | կ | ա | պ | ի | կ |
| գ | **ս** | տ | ձ | կ | ձ | կ | ու | ն | մ | տ |
| ա | **տ** | կ | յ | ա | փ | լ | ն | մ | կ | լ |
| ս | **ա** | ի | ու | գ | տ | ու | գ | ր | ի | չ |
| մ | **կ** | մ | ն | ո | ե | մ | ն | գ | չ | ա |

## *3.Ավելացրո՛ւ զ կամ գ և ստացիր բառ:*

___ազար, ___անգակ, ___դալ, ___ատիկ, ___նդակ, ___արուն, ___րո, ___որգ, ___որտ, ___կեռ, ___առնուկ, ___արմիկ, ___ազան

## *4. Փորձի՛ր կազմել նախադասություններ:*

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________



# Խխունջ          Խ,խ   Ջ,ջ

*խ խ խ*

*Խ Խ Խ*

*ջ ջ ջ*

*Ջ Ջ Ջ*

1. ***Ավելացրո՛ւ: Բաց թողած տառերի փոխարեն գրիր խ կամ ջ և ստացի՛ր բառ:***



__ուր, եղ__երու, է__, __արույկ, __ոզ, __ակ, __նձոր, __խունջ, է__միածին, եղին__, կամուր__, նն__արան, շր__ան, բան__արեղեն, առող__, ար__, առա__ին, __րվեժ, քա__, __ութակ, փուն__, մե__ակ, մի__ատ, մորե__:

2. ***Կարդա՛ բառերը և գրի՛ր:***

խխունջ, խնձոր, խակ, խելացի

___

ջութակ, ջահ, ջուր, ջայլամ, ջրվեժ

___

Խաչիկ, Խորեն, Ջուլիետա, Ջեմմա

___

*3. Լրացրո՛ւ վանդակները և գրի՛ր բառերը:*

   

*4. Կարո՞ղ ես այս վանկերով բառեր ստանալ:*

Ձու, կե, թակ, օ, մա, տա, օ, սօր, րա, ցույց, նի, խա, խա, ղակ, րույկ, նութ

*5. Կարդա՛:*

Ղազարոս Աղայան

Խխունջ խանում,
Խխունջ խանում,
Տանդ մենակ
Ի՞նչ ես անում:

Խխունջ խանում,
Խխունջ խանում,
Պոզդ ինչո՞ւ
Դուրս չես հանում:

*6. Նկարի՛ր բանաստեղծությունը:*

**«Խխունջ»**

# հավի ճուտ



# Վ վ, Ճ ճ

վ վ վ

Վ Վ Վ

ճ ճ ճ

Ճ Ճ Ճ

*1.Կարդա՛ և գրի՛ր:*

Մի տնակում ապրում էին մուկիկը, ծիտիկը և հավիկը:
Մի օր քուջուջ անելիս հավիկը մի հատիկ գտավ ու կանչեց.
— Հատի՛կ եմ գտել, հատի՛կ եմ գտել: Ո՞վ կտանի աղալու:
— Ես՝ չէ, — ասաց մուկիկը:
— Ես էլ՝ չէ, — ասաց ծիտիկը:

**2.Կազմի՛ր նախադասություն և ընկերոջդ համար կարդա:**

______________________________________________________________________

**3.Գտի՛ր բառերն ու գունավորի՛ր :**

Հավ, ճուտ, վարդ, վագր, հաց, ճանճ, վրձին, հատիկ

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ա | Ջ | պ | հ | ա | վ | դ | տ | վ | կ | մ | հ |
| լ | Պ | ջ | վ | ք | ո | ե | ռ | ա | տ | զ | վ |
| ճ | Ճ | չ | ս | հ | գ | յ | կ | ր | ռ | վ | ր |
| ու | Ց | ի | վ | ա | գ | ր | կ | դ | լ | ր | ձ |
| տ | Փ | թ | գ | փ | ձ | ջ | ճ | չ | պ | ձ | ս |
| զ | Ն | հ | ա | ց | մ | ի | ա | ր | ու | ի | ա |
| վ | Հ | ք | ու | ռ | զ | ց | ն | ո | վ | ն | ո |
| հ | Հ | ա | տ | ի | կ | կ | ճ | մ | ա | գ | պ |

**4.Գրի՛ր բառեր, որոնք գրվում են մեծատառով:**

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

**5.Վանկերը միացրո՛ւ և բառեր ստացիր:**

վա-րազ ____________________, ճա-նա-պարհ ___________________________,

հա-մեղ_____________________, հա-մար-ձակ____________________________,

ճար-պիկ___________________, կա-քա-վիկ_____________________________,

սահ-նակ___________________, մահ-ճա-կալ ___________________________,

կա-հույք ___________________, պա-հա-րան____________________________,

ճա-զար ___________________, ա-ռա վոտ _____________________________

# բարև, արև



բ բ բ

Բ Բ Բ

և և և

Եվ Եվ Եվ

Արևը

Արևը, առյուծի մեջքին նստած, թռչում է երկնքում: Առյուծը իր մեծ թրով պաշտպանում է նրան: Արևը երեկոյան գնում և հանգստանամ է մոր գրկում:

***1. Կարդա՛ և գրի՛ր:***

***2. Կարդա՛ և պատասխանի՛ր հարցերին:***

Գիշերը երկնքում ի՞նչ ես տեսնում:

Լուսինը երկնքում ի՞նչ է անում:

______________________________________________

______________________________________________

Աստղերը երկնքում ի՞նչ են անում:

______________________________________________

______________________________________________

## Կրակի գունդը

Արևը կրակի հսկա գունդ է: Դրա համար էլ նա միշտ լույս և տաքություն է տալիս: Արևը երկնքում գնդակի չափ է երևում, որովհետև մեզնից շա՛տ-շա՛տ հեռու է: Առանց արևի մենք չենք կարող ապրել:

***3.Կարդա՛ և գրի՛ր:***

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

***4. Կարդա՛ և գրի՛ր:***

կրակի գունդ, մեծ գնդակ______________________________

կարմիր արև, պայծառ գարուն___________________________

կանաչ տերև, փայլուն աստղեր__________________________

Ֆ ֆ, Ժ ժ կոնֆետ  ժամ 

ժ ժ ժ

Ժ Ժ Ժ

ֆ ֆ ֆ

Ֆ Ֆ Ֆ

***1. Կարդա՛:***



## Կոնֆետի անձրև

Մի անգամ քաղաքում կոնֆետի անձրև էր գալիս: Կոնֆետները կարկտի նման էին, բայց սպիտակ չէին, այլ գունավոր՝ կարմիր, կապույտ, կանաչ: Մի տղա կերավ կանաչ կոնֆետն ու տեսավ, որ խնձորի է: Մի ուրիշ տղա էլ կարմիրը փորձեց, ու պարզվեց, որ դա էլ ելակի է:

-Վա՜յ, իսկական կոնֆետներ են, ինչ լա՜վ են, — ուրախացան երեխաներն ու արագ-արագ լցրին գրպանները: Ինչքան էլ նրանք հավաքում էին, մեկ է՝ կոնֆետները չէին վերջանում, անձրևի պես թափվում էին: Կոնֆետները շատ անուշ հոտ ունեին ու ոտքի տակ սառույցի պես խրթխրթում էին: Դպրոցից տուն գնացող երեխաներն էլ հասցրին պայուսակները լցնել: Տատիկներն էլ կոնֆետով զամբյուղներ էին տանում: Իսկական տոն էր: Քաղաքում մարդիկ սպասում էին, որ երկնքից էլի կոնֆետներ կթափվեն, բայց կոնֆետի ամպը ոչ մի անգամ չի երևացել:

***2. Կարդա՛ և գրի՛ր:***

օրացույց, ժամացույց________________________________________

ֆուտբոլ, ֆուտբոլիստ______________________________________

ասֆալտ, կարտոֆիլ__________________________________________

Րաֆֆի, Նունուֆար, Ֆրիկ____________________________________

***3. Կարդա՛ և գրի՛ր շուտասելուկը:***

Ծառը խշշում է,

Գետը վշշում է,

Ջուրը թշշում է,

Օձը ֆշշում է:

____________________________________

____________________________________

____________________________________

____________________________________

***4. Կազմի՛ր նախադասություններ ֆուտբոլ, կոնֆետ, ժամացույց, Ժաննա բառերով և կարդա՛ ընկերներիդ համար:***

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

*5. Գտի՛ր բառերն ու գունավորի՛ր :*

Ժամ, ժամացույց, ֆուտբոլ, Րաֆֆի, կոնֆետ, անձրև

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ա | զ | պ | ժ | ա | մ | դ | տ | վ | կ | մ | հ |
| լ | պ | ջ | վ | ք | ա | ն | ձ | ր | և | զ | կ |
| Ր | ճ | չ | ս | հ | գ | յ | կ | ր | ռ | վ | ո |
| ա | ց | ի | ժ | ա | մ | ա | ց | ու | յ | ց | ն |
| ֆ | փ | թ | գ | փ | ձ | ջ | ճ | չ | պ | ձ | ֆ |
| ֆ | ն | ֆ | ու | տ | բ | ո | լ | ր | ու | ի | ե |
| ի | հ | ք | ու | ռ | զ | ց | ն | ո | վ | ն | տ |
| հ | հ | ա | տ | ի | կ | կ | ճ | մ | ա | գ | պ |

*Արի՛ նամակ գրենք այս գրքի հերոսներին:*

## Աղվեսն ու խաղողը

Քաղցած աղվեսը տեսավ խաղողի վազը՝ կախ ընկած ողկույզներով, և ուզեց դունչը հասցնել խաղողին, բայց չկարողացավ: Եվ հեռանալով՝ ինքն իրեն ասաց. «Դեռ խակ է»:

## Գայլն ու ձին

Գայլն ուզում է ձիուն ուտել: Ձին ասում է.

_ Ա՛յ գայլ, ես շատ ծեր եմ, ինձ մի՛ կեր:

_Ես ինչպե՞ս իմանամ, որ դու ծեր ես:

— Իմ տարիքն իմ ոտքի տակ գրված է:

Գայլը մոտենում է, որ կարդա: Ձին այնպես է քացի տալիս, որ գայլի աչքերը պեծին-պեծին են տալիս:

## Երկու ձագուկ

Երկու ձագուկ մի հասկ գտան: Հասկում շատ հատիկներ կային: Ագահ ձագուկները բռնեցին հասկի երկու ծայրերից ու սկսեցին քաշել՝ մեկը իր կողմը, մյուսը՝ իր: Հասկն այնքան քաշքշեցին, որ երկուսն էլ ընկան: Այդ ժամանակ ծիտը վրա հասավ, հասկը ճանկեց ու թռավ:











